«Global Atomic Quiz» միջազգային կրթական նախագծի անցկացման կանոններ

1. Ընդհանուր դրույթներ

Սույն կանոններով հստակեցվում են «Global Atomic Quiz» միջազգային կրթական նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) անցկացման կարգն ու ժամկետները, ներառյալ՝ Նախագծին մասնակցելու կանոններն ու Նախագծի արդյունքների ամփոփման կարգը: Նախագծի նպատակը միջուկային ֆիզիկայի հիմունքների մասին գիտելիքների հանրայնացումն է, ատոմային տեխնոլոգիաների ոլորտում համաշխարհային վերջին նվաճումների և խաղաղ նպատակներով դրանց կիրառման առավելությունների մասին միջազգային լսարանին իրազեկելը:

Նախագծի թիրախային լսարանը (այսուհետ՝ Մասնակիցներ) լայն միջազգային լսարանն է, մասնավորապես անձինք աշխարհի ցանկացած երկրից, որոնք համապատասխանում են սույն կանոնների պահանջներին ու հետևում են դրանց:

Նախագծին մասնակցելով, Մասնակիցները լիովին համաձայնում են սույն կանոններին (այսուհետ՝ Կանոններ):

Նախագիծը կանոնակարգվում է սույն Կանոններով, ոչ կոմերցիոն կրթական միջոցառում է, չի հանդիսանում գովազդային խթանող միջոցառում և վիճակախաղ:

Ընդհանուր տեղեկություններ

1.1. Անվանում՝ «Global Atomic Quiz» միջազգային կրթական նախագիծ

1.2. Նախագծի անցկացման վայր՝ աշխարհի բոլոր երկրներն՝ առանց սահմանափակումների:

1.3. Նախագծի կազմակերպիչն է ատոմային էներգիայի գծով տեղեկատվության զարգացման կենտրոնների՝ «Ապագայի էներգիա» (Ապագայի էներգիա ԻՈԱԿ) ՀՎՀ 7726385219, ԳՊԾ 772601001, իրավաբանական հասցե՝ 117105 ՌԴ, ք. Մոսկվա, Վարշավյան մայրուղի, շ. 3 հասցեում (այսուհետ՝ Կազմակերպիչ):

1.4. Նախագծի իրականացման ժամկետ

1.4.1. Նախագծի իրականացման ընդհանուր ժամկետ-2023 թ.–ի նոյեմբերի 10-ից մինչև հաղթողներին Մրցանակների հանձնումը, սակայն, ոչ ուշ քան 2023 թ.–ի դեկտեմբերի 31-ը: Նախագծի իրականացման ընդհանուր ժամկետը ներառում է այն ժամանակահատվածը, որի ընթացքում Նախագծի մասնակիցներն իրականացնում են գործողություններ, որոնք անհրաժեշտ են Նախագծին մասնակցելու համար, ժամանակ, որը անհրաժեշտ է Կազմակերպչին՝ որոշելու Նախագծի հաղթողներին, ինչպես նաև ժամանակ՝ Նախագծի արդյունքներով, Կազմակերպչի կողմից հաղթողներին մրցանակ շնորհելու համար:

1.4.2. Նախագծի հիմնական մասի անցկացման ժամանակահատված-միջուկային ֆիզիկայի հիմունքների և ատոմային բնագավառի համաշխարհային նվաճումների գիտելիքների հիման վրա անցկացվող գիտահանրամատչելի վիկտորինայի առաջադրանքների կատարում (այսուհետ՝ Վիկտորինա)-2023թ.-ի նոյեմբերի 10-ին 00 ժամ 00 րոպե 00 վայրկյանից մինչև 2023թ.-ի նոյեմբերի 10-ի ժամը 23-ը 59 րոպե 29 վայրկյան (Մասնակցի ժամանման վայրի տեղական ժամանակով):

1.4.3. Նախագծի արդյունքների ամփոփման ու հաղթողների անունների հրապարակման ժամանակահատված-մինչև 2023թ.-ի նոյեմբերի 17-ը ներառյալ:

1.4.4. Նախագծին մասնակցելու արդյունքներով հաղթողներին մրցանակներ հանձնելու ժամանակահատված՝ 2023թ.-ի նոյեմբերի 30-ից մինչև 2023թ.-ի դեկտեմբերի 31-ը ներառյալ գործող Կանոնների համաձայն:

1.4.5. Մրցանակների հանձնման կոնկրետ ժամկետները կորոշվեն ավելի ուշ, ինչի մասին Նախագծի Կազմակերպիչները Մասնակիցներին կծանուցեն լրացուցիչ:

1.4.6. 1.4.3. – 1.4.5. կետերում նշված ժամկետները կարող են փոփոխվել՝ Նախագծի Կազմակերպիչների հայեցողությամբ:
1.4.7. Կազմակերպիչից անկախ պատճառներով հաղթողներին մրցանակների հանձնման անհնարինության դեպքում (այդ թվում՝ բայց չսահմանափակվելով անհաղթահարելի ուժի, բնական աղետների, միջազգային փոստային առաքումների սահմանափակումների և արգելքների հանգամանքներով), Նախագծի Մասնակիցները կտեղեկացվեն այդ մասին լրացուցիչ: Տվյալ դեպքում Կազմակերպիչն իրավասու է իր հայեցողությամբ չեղարկել մրցանակների հանձնումը կամ՝ փոփոխել դրանք հանձնելու ժամկետները:
1.5. Նախագծի Մասնակիցներին տեղեկացնելու ձևերը
Նախագծի Կանոնների, անցկացման ժամկետների և արդյունքների մասին Մասնակիցները կտեղեկացվեն համացանցի միջոցով՝ quiz.atomforyou.com կայքում, ներառյալ՝ դրա բոլոր լեզուներով (այսուհետ՝ Կայք)
1.6. Մասնակիցների և/կամ նրանց ծնողների/օրինական ներկայացուցիչների հետ առաջնային հաղորդակցությունը, այդ թվում տվյալների ստուգումը, իրականացվում է միայն Նախագծի էլ.հասցեի միջոցով-info@atomforyou.com

2. Մասնակիցները և Նախագծին մասնակցելու պայմանները

2.1. Նախագծի մրցութային հատվածի Մասնակիցներ կարող են լինել աշխարհի ցանկացած երկրի ֆիզիկական անձինք, ովքեր լրացրել են գրանցման հայտը և տվել են Նախագծի կայքում անձնական տվյալների մշակման համաձայնություն: Մնացած բոլոր մասնակիցներն առանց սահմանափակումների կարող են առանց գրանցվելու մասնակցել Նախագծին, սակայն չեն դիտիվի որպես մրցույթի մասնակից:
2.2. Նախագծի անչափահաս մասնակիցները, ովքեր գործող օրենսդրության պահանջի ուժով չեն կարող ինքնուրույն գործողություններ անել՝ սույն պայմաններով նախատեսված, կատարում են դրանք իրենց ծնողների (կամ օրինական ներկայացուցիչների) և/կամ նրանց օգնությամբ:
2.2.1. Նախագծի անչափահաս մասնակիցները ինքնուրույն պարտավորություններ են կրում իրենց ծնողներին (օրինական ներկայացուցիչներին) ծանոթացնել սույն Կանոններին ու ստանալ իրենց ծնողների (օրինական ներկայացուցիչների) համաձայնությունը, այդ թվում՝ Նախագծին մասնակցելու համար:
2.3. Նախագծի մրցութային մասին չեն կարող մասնակցել
- Կազմակերպչի աշխատակիցները, ինչպես նաև անձինք, որոնք ներկայացնում են Կազմակերպչի շահերը, ինչպես նաև նրանց ընտանիքի անդամները
- Երրորդ անձանց աշխատակիցներն ու ներկայացուցիչները, որոնք պայմանագրային հարաբերություններ ունեն Կամզակերպչի հետ, ինչպես նաև կապված են կազմակերպության և/կամ Նախագծի անցկացման հետ, ինչպես նաև նրանց ընտանիքի անդամները:
- «Ռոսատոմ» պետկորպորացիայի ձեռնարկությունների աշխատակիցներն ու ներկայացուցիչները:

2.4. Նախագծի Մասնակիցները, մասնավորապես, իրավունք ունեն Նախագծի մասին տեղեկություններ ստանալ՝ համաձայն սույն Կանոնների
2.5. Նախագծի մասնակիցների պարտավորությունները
- պահպանել Նախագծի Կանոնները դրա անցկացման ժամանակ
- Նախագծի Կանոնների համաձայն՝ Կազմակերպչին ներկայացնել իր մասին հավաստի տեղեկատվություն
- այլ պարտավորություններ, որոնք նախատեսված են սույն Կանոններով

3. Նախագծի մրցույթին մասնակցելու կարգը: Նախագծի հաղթողներին որոշելը

3.1. Նախագծի մրցութային մասի ամփոփումամբ կորոշվեն Հաղթողները, ովքեր, համաձայն Նախագծի Կանոնների՝ Կազմակերպչի կողմից կստանան մրցանակներ (այսուհետ՝ Մրցանակներ)

3.2. Նախագծի մրցութային հատվածին մասնակցելու համար Մասնակիցը պետք է Կայքում լրացնի գրանցման հայտը:

3.2.1. Կայքում գրանցվելը պահանջում է, որպեսզի հավկնորդն իր մասին ներկայացնի հետևյալ տեղեկությունները՝ գրանցման համապատասխան հայտը լրացնելու միջոցով:

- Ազգանուն, Անուն
- Ծննդյան տարեթիվ
- Էլ.փոստի հասցե
- Բնակության երկիրը
- Նախագծին մասնակցելու և անձնական տվյալների մշակման մասին նշում
- Անչափահաս Մասնակիցների համար՝ ծնողի/օրինական ներկայացուցչի կողմից Նախագծին մասնակցելու համաձայնություն և ծնողի/օրինական ներկայացուցչի կողմից անձնական տվյալների մշակման համաձայնություն

3.2.2. Կազմակերպիչն իրավասու է մերժել այն Մասնակիցների մասնակցությունը մրցութային մասին, որոնց գրանցման հայտերը չեն լրացվել պատշաճ կարգով (մուտք է արվել թերի կամ սխալ տեղեկություն): Գրանցվելուց հետո Մասնակիցը հնարավորություն չի ունենա փոխել էլ.փոստի հասցեն, որը նշել է Կայքում՝ գրանցվելու ժամանակ:

3.3. Հաղթողների որոշումն իրականացվում է հետևյալ կարգով

3.3.1. Գրանցված Մասնակիցները պետք է կատարեն միջուկային ֆիզիկայի հիմունքների և ատոմային բնագավառի համաշխարհային նվաճումների գիտելիքների հիման վրա անցկացվող գիտահանրամատչելի վիկտորինայի առաջադրանքները:

3.3.1.1. Վիկտորինան անցկացվում է Համացանցում՝ quiz.atomforyou.com կայքում, ներառյալ՝ դրա բոլոր լեզուներով

3.3.1.2. Վիկտորինան կազմված է ատոմային թեմատիկայի տարբեր բարդության 20 հարցերից, որոնց Մասնակիցը պետք է պատասխանի՝ համակարգի առաջարկած հարցերից ընտրելով ճիշտ պատասխանը:

3.3.1.3. Մասնակիցը Վիկտորինայի հարցերին կարող է պատասխանել միայն մեկ անգամ: Վիկտորինային մի քանի անգամ մասնակցելու դեպքում՝ Մասնակիցները չեն դիտվի մրցույթի շրջանակում:

3.3.1.4. Մասնակիցը հաջորդ հարցին կարող է անցնել միայն նախորդին պատասխանելու դեպքում:

3.3.1.5. Վիկտորինայի յուրաքանչյուր առաջադրանքին պատասխանելու ժամանակը կհաշվարկվի ժամանակաչափով: Բոլոր առաջադրանքների կատարման արագությունը հաշվի կառնվի Մասնակցի ամփոփիչ միավորներում՝ Հաղթողների վարկանիշը կազմելու ժամանակ:

3.3.1.6. Ճիշտ պատասխանների քանակի և Վիկտորինան անցնելու արագության հիման վրա ավտոմատ կերպով ձևավորվում է Հաղթողների վարկանիշը: Որքան բարձր միավորներ է ստացել Մասնակիցը, այնքան բարձր է նրա դիքրը վարկանիշային աղյուսակում:

3.3.2. Մասնակցի ամփոփիչ միավորը ձևավորվում է հետևյալ բաղադրիչներից

3.3.2.1. Բաժիններից յուրաքանչյուրում ճիշտ պատասխանների քանակը տարբեր կշիռ ունի՝ «Ճի՞շտ, թե՞ սխալ» բաժինը: - 1 միավոր յուրաքանչյուր ճիշտ պատասխանի համար; «Ձեր տարբերակը» բաժինը – 1 միավոր յուրաքանչյուր ճիշտ պատասխանի համար; «Հերթականությամբ» բաժինը – 1 միավոր մեկ համընկման համար, 2 միավոր՝ երկու համընկման համար, 4 միավոր՝ չորս համընկման համար:

3.3.2.2. Մասնակցի ամփոփիչ հաշվարկում լրացուցիչ միավորի համար հաշվի է առնվում Վիկտորինայի առաջադրանքների կատարման արագությունը: Յուրաքանչյուր հարցի համար կիրառվում է ժամանակավոր գործակից, որը հաշվարկում է յուրաքանչյուր հարցին պատասխանելու արագությունը:

3.3.2.3. Որքան շատ է միավորների վերջնական գումարը՝ այնքան բարձր է դիրքը Մասնակիցների վարկանիշային աղյուսակում:

3.3.2.4. Մի քանի մասնակիցների շրջանում միավորների հավասարության դեպքում ավելի բարձր տեղ գրված է համարվում այն Մասնակիցը, որը ամենաարագն է կատարել վիկտորինայի առաջադրանքները:

3.3.3. Նախագծի Հաղթողների հաստատում

3.3.3.1. Հաղթողների աշխարհագրական հավասարակշռված ներկայացվածությունն ապահովելու համար, մինչև 2023 թվականի նոյեմբերի 16-ը, Կազմակերպիչը կորոշի Վիկտորինայի 100 հաղթողների՝ ելնելով եզրափակչի մասնակիցների վարկանիշից՝ Կազմակերպչի կողմից սահմանված երկրի/տարածաշրջանային քվոտայի համաձայն: Երկրի/տարածաշրջանի քվոտան որոշվում է Կազմակերպչի կողմից Ծրագրի ավարտից հետո՝ մասնակիցների երկրների կամ տարածաշրջանների ընդհանուր կազմի համամասնությամբ:

3.3.3.2. Կազմակերպիչն էլ.փոստով կապվում է Հաղթողների հետ՝ ստուգելու համար Մասնակիցներին ներկայացված պահանջների և գրանցման ժամանակ նրանց տվյալների համապատասխանելիությունը: Այդ ժամանակ Կազմակերպիչը Հաղթողներից պահանջում է Նախագծի էլ.փոստին ուղարկել բնակության գործող հասցեն (երկիր, քաղաք, փողոց, շենք, մասնաշենք, բնակարան, փոստային ինդեքս), ինչպես նաև՝ կոնտակտային հեռախոսահամար՝ Մրցանակներ ստանալը կազմակերպելու համար:

3.3.3.3. Եթե հաղթողը չի պատասխանում Կազմակերպչին ծանուցումը ստանալուց հետո 4 (չորս) օրացույցային օրերի ընթացքում, և/կամ Կազմակերպչի մոտ առաջանում են հիմնավոր կասկածներ՝ կապված տվյալների գրանցման ժամանակ Մասնակցի տվյալների համապատասխանելիության հետ, այդ թվում՝ բայց չսահմանափակվելով, եթե էլ.փոստը չի համապատասխանում գրանցման ժամանակ նշվածին, կամ Մասնակիցը խեղաթյուրել է անձնական տվյալները, գրանցվել է մտացածին և/կամ ուրիշի ԱԱՀ-ով, ապա՝ տվյալ Հաղթողի մրցանակը չեղյալ կհայտարարվի, և Կազմակերպիչն իրավասու կլինի ընտրել մեկ այլ հաղթողի՝ համապատասխան վերը նշված ընթացակարգի:

4. Մրցանակներ՝ Նախագծի Մասնակիցներին

4.1. Նախագծի իրականացման արդյունքներով, բոլոր Մասնակիցները, որոնք գրանցվել են Նախագծին մասնակցելու համար, Նախագծի Կազմակերպչի կողմից կստանան անվանական էլեկտրոնային վկայականներ: Մասնակիցները, որոնք մասնակցել են Նախագծին առանց գրանցվելու՝ կստանան ոչ անվանական վկայականներ:

4.2. Նախագծի մրցութային մասի Հաղթողներ կարող են դառնալ առավելագույն քանակով միավորներ հավաքած 100-ից ոչ ավելի Մասնակիցներ:

4.3. Ծրագրի մրցակցային մասի հաղթողները ստանում են մրցանակ Նվերների հավաքածուի տեսքով, որը բաղկացած է թեմատիկ ապրանքներից՝ սվիթշոթ՝ ատոմների տեսքով հինգ ասեղնագործված կպչուն պիտակներով և շոփեր-պայուսակ (այսուհետ՝ Մրցանակ):

4.3.1. 1.4.2. կետում նշված ժամկետի ավարտից հետո, 30 օրվա ընթացքում Կազմակերպիչը Մասնակցի էլ.փոստին ուղարկում է նամակ, որում նշում է Մրցանակը ստանալու կարգը և այն ստանալու համար անհրաժեշտ տեղեկությունների, փաստաթղթերի ցանկը:

4.3.2. Մրցանակների հանձնումն իրականացվում է Հաղթողների տրամադրած էլ.փոստի միջոցով և/կամ անձամբ նրանց հանձնելու միջոցով: Յուրաքանչյուր դեպքում Կազմակերպիչն է իրավասու որոշել Մրցանակը հանձնելու ձևը, ինչի մասին Հաղթողները կծանուցվեն Մրցանակի հանձնման շրջանակում: Փոստային առաքման դեպքում Կազմակերպիչը պատասխանատվություն չի կրում Մրցանակը վերջնական ստացողին հասցնող տրանսպորտային ընկերության համար: Ծանրոցի կորստի դեպքում Մասնակիցն իրավունք չունի պահանջել որևէ փոխհատուցում՝ կապված Նախագծին մասնակցելու հետ:

4.4. Կազմակերպիչը պատասխանատվություն չի կրում Մրցանակը ստանալու համար որևէ երկրի օրենսդրությամբ նախատեսված, հնարավոր հարկեր ու տուրքեր վճարելու համար: Հարկեր և տուրքեր վճարելու բոլոր պարտավորությունները կրում է Մրցանակը ստացողը:

5. Եզրափակիչ դրույթներ

5.1. Բոլոր վեճերն ու տարաձայնությունները, որոնք առաջանում են կապված Նախագծի կազմակերպման և անցկացման հետ՝ ենթակա են լուծման բանակցությունների ճանապարհով: Բանակցությունների ճանապարհով չկարգավորված վիճելի հարցերը ենթակա են լուծման Կազմակերպչի գտնվելու վայրի դատարանում՝ Ռուսաստանի Դաշնության նյութական և Դատավարական իրավունքին համապատասխան:

5.2. Նախագծին մասնակցելուն ուղղված փաստաթղթերը ստանալու համար, Սույն Կանոններով նախատեսված բոլոր գործողությունների իրականացման ծախսերը Մասնակիցները, ծնողները և/կամ օրինական ներկայացուցիչները անում են ինքնուրույն:

5.3. Բոլոր ձեռագիր փաստաթղթերը պետք է գրված լինեն ընթեռնելի և հստակ: Սկան արված և լուսապատճենված տարբերակները պետք է լինեն ամբողջությամբ ընթեռնելի, հակառակ դեպքում՝ Կազմակերպիչն իրավունք ունի համարել դրանք ոչ պատշաճ:

5.4. Կազմակերպչից անկախ պատճառներով, նախատեսված ժամկետներում Մրցանակների փոխանցման անհնարինության դեպքում՝ Կազմակերպիչն իր հայեցողությամբ իրավասու է չեղարկել կամ փոխել առաքման ժամկետները: Այդ դեպքում Մասնկիցը իրավունք չունի պահանջել որևէ փոխհատուցում՝ կապված Նախագծին մասնակցելու հետ:

5.5. Նախագծի անցկացման համար, ծրագրի շրջանակում ցանկացած գործողություն կատարելու նպատակով Կազմակերպիչն իրավասու է ներգրավել երրորդ անձանց: